



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2017
ԴԵՎՏԵՄԲԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	4
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում	18
1.3. Ջրահեռացման համակարգ	23
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	25
1.5. Էներգոհամակարգ	26
1.6. Մեքենա-մեխանիզմներ	31
2.ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	34
2.1.Բաժանորդների տվյալներ	34
2.2.Հասույթ	34
2.3.Գանձում	37
2.4.Դերիտորական պարտքեր	38
2.5.Ջրաչափեր	40
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	43
3.ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ	45
3.1.Ջրամատակարարման շարունակականություն	45
3.2.Էլեկտրաէներգիայի կառավարում	46
3.3.Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	51
3.4.Կարգավարման խմբի աշխատանքներ	53
4.ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ	56
4.1.Համակարգչային ցանց	56
4.2.Ինտերակտիվ համակարգ	56
4.3. Բջջային օպերատորներ և ինտերնետ	57
5.ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	58

1. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2017 թվականի ընթացքում Տարածաշրջանների տնօրինությունների կողմից կատարված աշխատանքներն ամփոփելով՝ ակնհայտնորեն կարող ենք արձանագրել, որ չնայած այն բարդ էր ու դժվարին, սակայն ձեռքբերումներն ու խնդրահարույց դեպքերի լուծումներն էլ քիչ չէին: Յուրաքանչյուր նոր վերցված ուղի սկզբում ունենանում է ընդգծված անհարթություններ, որոնք ժամանակի ընթացքում հղկվում են այնքանով, որքանով դու փորձում ես ճանաչել քեզ բաժին հասած ճանապարհին ու այն արդյունավետորեն կառուցելու և հարթելու միջոցներ գտնում: Այս նոր ճանապարհին Տարածաշրջանների տնօրինությունները փորձեցին ոչ միայն համակարգի նախկին շահագործող ընկերությունների աշխատակազմին փոխանցել «Վեոլիա Ջուր» Ընկերության որդեգրած քաղաքականությունը՝ նրանց հնարավորինս ադապտացնելով նոր մոտեցումներին և գործելակերպին, այլև բազիսային տարվա ընթացքում որոշակի ճյուղերում կատարած բարեփոխումների արդյունքում արձանագրեցին տվյալ բնակավայրերի էլակետային ցուցանիշերի համեմատությամբ նշանակալի աճ: Ամփոփ ներկայացնելով 2017 թվականին կատարված աշխատանքները՝ հայտնում ենք, որ Շահագործման Տարածաշրջանների Տնօրինությունների կողմից այս ամիսներին՝

- ✓ ջրամատակարարման ցանցում վերացվել է մոտ 21.125, իսկ ջրահեռացման ցանցում մոտ 38.481 վթար,
- ✓ փոխարինվել է 46, իսկ շահագործումից հանվել է շուրջ 13 հաստ պոմպ, որի արդյունքում տնտեսվել է ամսական շուրջ 127.850կՎտ/ժամ էլեկտրաէներգիա,
- ✓ կառուցվել է շուրջ 43636մ ջրագիծ և 28419մ կոյուղագիծ,
- ✓ շահագործումից հանվել է ավելի քան 94.166մ հին ջրագիծ,
- ✓ և իհարկե, պետք է նշել, որ կատարված այս աշխատանքների արդյունքում ոչ միայն բարձրացել է բաժանորդներին մատարակարվող ջրի որակը, այլև տևողությունը՝ առանձին բնակավայրերում ունենալով ընդհուպ մինչև 17 ժամ ավելացում:

1.1 Ջրամատակարարման համակարգի կառավարում


➤ Քաղաք Երևան

✓ Գյուլբենկյան, Ա. Խաչատրյան և Բակունց փողոցների ջրամատակարարումը շուրջօրյա դարձնելու նպատակով կառուցվել է $D=200$ մմ $L=34$ մ և $D=100$ մմ $L=100$ մ ջրագիծ և տեղադրվել $D=100$ մմ ճնշման կարգավորիչ փական: Արդյունքում թաղամասի ջրամատակարարման տևողությունը 17 ժամից դարձել է շուրջօրյա, իսկ ջրի ճնշման բարձրացման հետևանքով Գյուլբենկյան 43 հասցեի պոմպի հզորությունը 4.4կՎտ-ից նվազել է 1.2կՎտ/ժամի: Կառուցված նոր ջրամատակարարման հորերի և տեղադրված նոր փականային հանգույցների արդյունքում ցանցը նաև դարձել է կառավարելի և վերահսկելի:

Գյուլբենկյան փողոցի ջրամատակարարման սխեման

աշխատանքներից առաջ

աշխատանքներից հետո



✓ Լուկաշին թաղամասի 1-ին փողոցում կատարված վթարաորոնողական



աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է 2 հատ խոշոր գաղտնի վթար, որոնց վերացումից հետո խնայվել է $Q=7$ լ/վ ջրաքանակ, ցանցում բարձրացել է ճնշումը և վերացել են ջրի ճնշման հետ կապված բաժանորդների բողոքները:

✓ Մազմանյան փողոցում կատարված վթարաորոնո-դական աշխատանքների արդյունքում հայտնաբերված գաղտնի վթարը վերացնելուց հետո խնայվել է $Q=4/վ$ ջրաքանակ, ցանացում բարձրացել է ճնշումը և վերացել են ջրի ճնշման հետ կապված խնդիրները:



✓ Սիսակյան փողոցում ավտոտնակների տակ գտնվող վթարված $D=150$ մ ջրագիծը



շրջանցելու նպատակով կառուցվել է $D=110$ մ $L=24$ մ պոլիէթիլենային և $D=80$ մ $L=13$ մ պողպատե ջրագիծ: Աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $D=150$ մ $L=24$ մ վթարված ջրագծի հաստվածը և խնայվել է $Q=11/վ$ ջրաքանակ:

✓ Վարդաշեն 9 փողոցի $D=100$ մ $L=160$ մ պողպատե ջրագիծն ամբողջությամբ քայքայվել էր և պիտանի չէր հետագա շահագործման համար: Կոռոզիայի ենթարկված և քայքայված ջրագծի վրա առկա էին բազմաթիվ վթարներ, որից սնվում էին



թվով 2 բազմաբնակարան շենքերը և Վարդաշեն 9 փողոցում գտնվող թիվ 2 ուսումնարանը: «Էրեբունի» տեղամասի աշխատակիցների կողմից քայքայված ջրագիծը



փոխարինվել է $D=75$ մ $L=160$ մ պոլիէթիլենային ջրագծով: Իրականացված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $D=100$ մ $L=160$ մ քայքայված

պողպատե ջրագիծը:

✓ Ջրաշեն թաղամասից դեպի «Մուշականի» ՕԿՁ տանող $D=100$ մմ ջրագծի $L=250$ մ երկարությամբ հատվածը խիստ քայքայված էր, և խողովակաշարի վրա հաճախակի տեղի ունեցող վթարների հայտնաբերումն ու վերացումը գրեթե անհնարին էր, քանի որ ջրագիծն անցնում էր սեփական տնատիրությունների տարածքներով: Խնդրի կարգավորման համար «Էրեբունի» տեղամասի աշխատակիցների կողմից քայքայված ջրագիծը փոխարինվել է $D=90$ մմ $L=250$ մ պոլիէթիլենային ջրագծով՝ շրջանցելով սեփական տնատիրությունները: Կատարված աշխատանքների արդյունքում վերացվել են ապօրինությունները, և տնտեսվել է մոտ 2լ/վ ջրաքանակ:



✓ Բաղյան 10 շենքի հարևանությամբ անցնող $D=200$ մմ $L=150$ մ քայքայված ջրագիծն անցնում էր սեփական տնատիրությունների տակով, և առկա վթարների վերացումը գրեթե անհնարին էր: «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել են նոր $D=90$ մմ $L=100$ մ և $D=63$ մմ $L=50$ մ ջրագծեր՝ շրջանցելով սեփական տնատիրությունները: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է 2լ/վ ջրաքանակ, վերացվել են ապօրինի միացումները:



➤ **Քաղաք Գյումրի**


✓ Երևանյան խճուղու վերջնամասում շահագործումից հանվել է D=600մ L=200մ ջրագիծ: Փոխարենը ներարկման միջոցով տեղադրվել է D=75մ L=200մ պոլիէթիլենային խողովակ, տեղադրվել է D=100մ փական, ինչի արդյունքում բարելավվել է նշված փողոցի ջրամատակարարումը:



✓ Դուսկոյի փողոցի՝ «Արգո» խանութի հարևանությամբ, տեղադրվել է D=200մ փական, կառուցվել է D=200մ L=10մ ջրագիծ, ինչի արդյունքում բարելավվել է նշված հաստվածի ջրամատակարարումը և ցանցը դարձել է կառավարելի:



✓ Չայկովսկի փողոցի վերջնամասում շահագործումից հանվել է D=300մ L=700մ թուջե ջրագիծ, ինչի արդյունքում հնարավորություն է ստեղծվել խուսափել հաճախակի կրկնվող գաղտնի վթարներից՝ դարձնելով ցանցն առավել կառավարելի:



✓ «Քարհատ մեքենաներ» ՓԲԸ-ի տարածքում շահագործումից հանվել է D=150 L=300մ



թուջե ջրագիծ: Կատարված աշխատանքների արդյունքում ցանցը դարձել է կառավարելի, նվազել է գաղտնի վթարների քանակը և խնայվել Q=1.3լ/վ ջրաքանակ:

➤ Քաղաք Կապան

✓ «Գեղի» ՋՄԿ-ից մինչև Քաջարան մայրուղի ձգվող D=600մ ջրատարի մոտ L=800մ հատվածում առկա էր գաղտնի վթար՝ 80լ/վ ջրակորուստով: «Կապան» տեղամասի և գոտիավորման խմբի աշխատակիցները համատեղ կատարել են ջրամատակարարման ցանցի ուսումնասիրություն և իրականացրել ջրատարերի կառուցվածքային փոփոխություններ: D=600մ ջրատարի L=800մ երկարությամբ հատվածը շահագործումից հանվել է խցափակման միջոցով, և այլընտրանքային տարբերակով ջրամատակարարումն իրականացվել է գուգահեռ անցնող D=400մ ջրատարով: Միաժամանակ Կապան քաղաքը սնող և դեպի մարիչ հոր գնացող ջրատարին գուգահեռ պահեստային ջրատարի վրա տեղադրվել է D=500մ փական քաղաքը սնող հիմնական ջրատարի վթարային անջատման ժամանակ՝ պահեստային ջրատարով ջրամատակարարումն իրականացնելու համար: Կատարված աշխատանքների արդյունքում տնտեսվել է 80լ/վ ջրաքանակ:



✓ «Գյարդ-Աջաբաջ» D=600մմ ջրընդունիչ ջրատարի խողովակաշարերի հատման կետում՝ մարիչ հորի մոտ, «Կապան» տեղամասի աշխատակիցների կողմից «Աջաբաջ» D=600մմ ջրատարի վրա տեղադրվել է գծային D=400մմ փական՝ ջրի սեզոնային պղտորությունից խուսափելու նպատակով:

➤ Քաղաք Դիլիջան

«Դիլիջան» տեղամասի և գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից համատեղ



կատարված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում «Ֆրոլովի» մաքրման կայանից դեպի Դիլիջան քաղաք գնացող D=300մմ ջրատարի վրա հայտնաբերվել և ճեղքի զոդման միջոցով վերացվել է թվով 3 վթար, որի արդյունքում տնտեսվել է 24լ/վ ջրաքանակ:
Վթարաորոնողական



աշխատանքների շրջանակներում հայտնաբերվել է վթար նաև Աբովյան փողոցին հարակից անտառում՝ «Ֆրոլովի» մաքրման կայան գնացող D=400մմ ջրագծի վրա: Վթարը վերացվել է, որի արդյունքում տնտեսվել է մոտ 5լ/վ ջրաքանակ:

➤ Քաղաք Սևան




«Սևան» տեղամասի սպասարկման տարածքում կատարված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում Շինարարների փողոցում հայտնաբերվել և շահագործումից հանվել է D=50մմ L=85մ երկարությամբ քայքայված ջրագիծ: Աշխատանքների արդյունքում տնտեսվել է 4լ/վ ջրաքանակ:

➤ **Քաղաք Ալավերդի**


✓ Սարահարթ թաղամասի 1/4 շենքը սնող $D=50$ մմ պողպատե ջրագծի վթարված $L=5$ մ հատվածը փոխարինելու արդյունքում բարելավվել է շենքի ջրամատակարարումը, վերացել են ճնշման հետ կապված խնդիրները և խնայվել է $Q=1.2$ լ/վ ջրաքանակ:

Սարահարթ թաղամասի 1/4 շենքի ջրամատակարարման սխեման




✓ Քաղաքի 1-ին փողոցի 3-րդ շենքը սնող $D=80$ մմ պողպատե ջրագծի $L=12$ մ վթարված հատվածի մեջ ներարկման միջոցով տեղադրվել է $D=50$ մմ $L=12$ մ պոլիէթիլենային ջրագիծ, որի արդյունքում բարելավվել է շենքի ջրամատակարարումը և խնայվել է $Q=1.2$ լ/վ ջրաքանակ:

Սարահարթ թաղամասի 1/3 շենքի ջրամատակարարման սխեման




➤ **Քաղաք Ստեփանավան**

Ռումինական թաղամասում շուրջօրյա ջրամատակարարում ապահովելու համար թաղամասում կատարվել է ջրամատակարարման ցանցի սխեմայի ճշգրտում, վթարների հայտնաբերում, ինչպես նաև բարձր և ցածր ճնշումային հատվածների տարանջատում: Կատարված աշխատանքների արդյունքում խնայվել է $Q=5$ լ/վ ջրաքանակ և բարձրացել է թաղամասի ջրի ճնշումը $P=0.5$ մթն-ով:




➤ **Քաղաք Սպիտակ**

✓ Վարպետաց թաղամասը սնող $D=160$ մմ $L=20$ մ պոլիէթիլենային ջրագծի վթարված հատվածի փոխարինման արդյունքում բարելավվել է նշված թաղամասի ջրամատակարարումը, ցանցը դարձել է կառավարելի, խնայվել է $Q=1.2$ լ/վ ջրաքանակ:




✓ Էստոնական թաղամասի $D=200$ մմ ջրագծի վրա գտնվող գաղտնի վթարի վերացման **Էստոնական թաղ.** արդյունքում խնայվել է $Q=3$ լ/վ ջրաքանակ:




➤ **Քաղաք Բերդ**

✓ Թեղեղյան փողոցի $D=250$ մմ պողպատե ջրագծի վրա հայտնաբերվել և վերացվել է $Q=3$ լ/վ ջրաքանակով գաղտնի վթար, որի արդյունքում փողոցի ջրամատակարարման տևողությունն ավելացել է 1.5 ժամով, ինչպես նաև բարձրացել է ցանցում ջրի ճնշումը:



✓ Սահյան փողոցը սնող ջրագիծը վթարային և քայքայված լինելու պատճառով




փոխարինվել է $D=63$ մմ $L=10$ մ պոլիէթիլենային ջրագծով, որի արդյունքում բարելավվել է փողոցի ջրամատակարարումը՝ ինայվելով $Q=1$ լ/վ ջրաքանակ:

➤ **Քաղաք Տաշիր**

Քաղաքում $D=50$ մմ $L=24$ մ պոլիէթիլենային ջրագիծ կառուցելու արդյունքում բարելավվել է տեղի պոլիկլինիկայի և ՀԷՑ-ի ջրամատակարարումը, վերացել են ջրի ճնշման հետ կապված բողոքները:



Պոլիկլինիկայի և ՀԷՑ-ի ջրամատակարարման սխեման




➤ **Քաղաք Ապարան**

✓ Քաղաքում շուրջօրյա ջրամատակարարում ապահովելու նպատակով Եզնակի պոմպակայանում կառուցվել է $d=150$ մմ, $L=6$ պողպատե ջրագիծ և տեղադրվել $d=150$ մմ փական: Այժմ «Ժամեր» ՕԿՁ ջուր է մղվում ավելի փոքր հզորություն ունեցող պոմպերի միջոցով, ինչի արդյունքում նվազել է ամսական սպառված էլեկտրաէներգիայի ծավալը:




Եզնակի պոմպակայանի ջրամատակարարման սխեման




✓ Սարի Թաղի փողոցի $D=63$ մմ $L=5$ մ վթարված հատվածը փոխարինելուց հետո բարելավվել է թաղամասի ջրամատակարարումը, խնայվել է $Q=1.9$ լ/վ ջրաքանակ:

Սարի թաղ փողոցի ջրամատակարարման սխեմա



✓ «Գեղաձորի» ՕԿՁ-ից դուրս եկող D=75մմ վթարված պոլիէթիլենային ջրագծի L=30մ



հատվածի փոխարինման արդյունքում բարելավվել է գյուղի ջրամատակարարումը, ցանցը դարձել է վերահսկելի, խնայվել է Q=2.4լ/վ ջրաքանակ:


➤ **Քաղաք Վայք**

«Կամուրջ» թաղամասի ջրամատակարարումն իրականացվում էր դեռևս խորհրդային տարիներին կառուցված, կոռոզիայի հետևանքով ամբողջովին քայքայված ջրագծերով: Հաճախ կրկնվող վթարները հայտնաբերելը և վերացնելը բավական բարդ էր, քանի որ ջրագծերը կառուցված էին անկանոն հետագծերով, և դրանց սկզբնաղբյուրը անհայտ էր: «Վայք» տեղամասի աշխատակիցների կողմից «Կամուրջ» թաղամասում շահագործումից հանվել են D=50մմ և D=25մմ քայքայված ջրագծերը, կառուցվել է նոր ջրամատակարարման ցանց՝ պոլիէթիլենային խողովակներով D=50մմ L=100մ, D=32մմ L=70մ և D=20մմ L=25մ երկարությամբ: Աշխատանքների արդյունքում խնայվել է 6լ/վ ջրաքանակ:




➤ **Քաղաք Նոյեմբերյան**

«Գիժ Սար» աղբյուրից եկող D=90մմ ջրագծի L=19մ վթարված հատվածը փոխարինելու արդյունքում 1.5լ/վ-ով ավելացել է քաղաք եկող ջրաքանակը և բարելավվել է քաղաքի մի մասի ջրամատակարարումը:



➤ **Աշոցք համայնք**

Համայնքի ՕԿՁ-ն սնող «Դաղձուտներ» կապտաժներում արտահոսող ջրերը հավաքելու և դեպի ՕԿՁ ուղղելու նպատակով վերակառուցվել է 3-րդ կապտաժը,



ինչպես նաև կապտաժից դուրս եկող ջրաքանակը $D=400$ մմ մայր ջրատարի մեջ ուղղելու համար կառուցվել է $D=110$ մմ $L=190$ մ պոլիէթիլենային ջրագիծ, որի արդյունքում $Q=3-5$ լ/վ-ով ավելացել է Աշոցքի

ՕԿՁ լցվող ջրաքանակը, իսկ համայնքի ջրամատակարարման տևողությունը ավելացել է 2 ժամով:

➤ **Քարակերտ համայնք**

Քարակերտ համայնքի Գայի և Սևակի փողոցների ջրամատակարարումն իրականացվում էր 1980-ական թվականներին կառուցված մետաղական անոթակ ջրագծերով: Քայքայված և շահագործման համար ոչ պիտանի $D=100$ մմ $L=950$ մ ջրագծից սնվում էր թվով 65 բաժանորդ, որոնց պողպատե մուտքագծերը ևս ամբողջությամբ ենթարկվել էին կոռոզիայի: Ջրագծի վրա հաճախակի տեղի ունեցող վթարները հանգեցնում էին ջրակորուստների, ինչի արդյունքում խափանվում էր փողոցի բնականոն ջրամատակարարումը՝ առաջացնելով բաժանորդների դժգոհությունը:

Խնդրի կարգավորման համար Գայի և Սևակի փողոցների կոռոզիայի ենթարկված և խիստ վթարային վիճակում գտնվող ջրագիծը փոխարինվել է նոր $D=110$ մմ պոլիէթիլենային գրագծով: Պոլիէթիլենային խողովակներով փոխարինվել են նաև բաժանորդների մուտքագծերը: Կատարված աշխատանքների արդյունքում սեփական տարածքից դուրս է բերվել նաև թվով 49 ջրաչափական հանգույց /մնացած 15 ջրաչափերն արդեն դրսում էին, իսկ 1 ջրաչափի տեղափոխումը տարածքից դուրս ընթացքի մեջ է/:



Ջրագծի փոխարինման արդյունքում բարձրացել է ցանցի հուսալիությունը և կառավարելիությունը: Հոսակորուստների հայտնաբերման ու վերացման աշխատանքների ճիշտ և օպտիմալ կազմակերպումը դարձել է դյուրին, շարունակականության անկման տեխնածին պատճառները գրեթե բացառվում են, իսկ ջրաքանակի հաշվառումը ներկայումս հնարավոր է ավելի ճշտգրիտ իրականացնել:

Ստորև ներկայացվում է հաշվետու ժամանակահատվածում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինությունների կողմից կատարված աշխատանքները աղյուսակային տեսքով:

Աշխատանքների հակիրճ նկարագիրը

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1249
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	24770
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	17540
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	9400
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	61
Շահագործումից հանված ջրագիծ	մ	4867.6
Կառուցված ջրագիծ	մ	2535.2
Շահագործումից հանված կոյուղագիծ	մ	120.1
Կառուցված կոյուղագիծ	մ	290.1
Վերացված գաղտնի վթարներ	հատ	97
Փոխարինված փական	հատ	165
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	188
Մաքրված դիտահոր	հատ	2283
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	123.7
Վերացված վթարներ		
Ջրամատակարարման ցանցում	հատ	2223
Ջրահեռացման ցանցում	հատ	3862
Պոմպակայաններում	հատ	165
Մաքրված անձրևընդունիչ	հատ	393

Դեկտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

h/h	Տեղամաս	Տեղի ունեցած վթարների քանակը		
		Պոլիէթիլենային խողովակներ	Մետաղական խողովակներ	Այլ աշխատանքներ
1.	Կենտրոն	0	56	23
2.	Հյուսիս	2	15	57
3.	Հարավ	4	43	13
4.	Էրեբունի	3	79	15
5.	Արմավիր	29	55	17
6.	Արտաշատ	85	31	6
7.	Արարատ	37	78	3
8.	Մասիս	42	18	2
9.	Գավառ	14	7	27
10.	Սևան	6	8	13
11.	Մարտունի	0	12	0
12.	Վարդենիս	0	4	1
13.	Ճամբարակ	2	2	2
14.	Դիլիջան	6	18	34
15.	Վայք	6	3	16
16.	Եղեգնաձոր	9	9	19
17.	Ջերմուկ	2	3	1
18.	Սիսիան	21	17	11
19.	Գորիս	0	10	13
20.	Կապան	16	31	12
21.	Մեղրի	3	1	3
22.	Արաբկիր	6	79	0
23.	Ջեյթուն	0	52	0
24.	Մաշտոց	9	45	0
25.	Շահումյան	6	55	0
26.	Այվերդի	12	32	0
27.	Բերդ	12	21	0
28.	Նոյեմբերյան	18	16	0
29.	Իջևան	13	36	0
30.	Ստեփանավան	13	8	0
31.	Տաշիր	20	8	0
32.	Ապարան	7	17	0
33.	Լոռի	63	56	0
34.	Շիրակ	72	146	0
35.	Արթիկ	32	21	0
36.	Սպիտակ	17	29	0
37.	Թալին	12	13	0
38.	Աշոցք	12	15	0
39.	Էջմիածին	17	23	0
40.	Աշտարակ	20	19	0
41.	Հրազդան	12	25	0
42.	Չարենցավան	15	14	0
43.	Աբովյան	11	19	0
Ընդամենը		686	1249	288

1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում

Հաշվետու ժամանակահատվածում տեղադրվել, փոխարինվել կամ սահամանազատման կետեր են տեղափոխվել տարբեր տրամագծերի ջրաչափեր:

h/h	Հասցե	D (մմ)	Քանակ	Նշում
1.	գ. Դաշտ, միջնակարգ դպրոց	20	1	Տեղադրված
2.	գ.Դավթաշեն, 8-րդ փ., 1-1տ.	20	1	Տեղադրված
3.	գ.Դավթաշեն, 8փ.,01տ.	20	1	Տեղադրված
4.	ք.Վանաձոր Շինարարների 11 Թիվ 30 մանկապարտեզ	40	1	Տեղադրված
5.	ք.Աբովյան 40-9	15	1	Տեղադրված
6.	ք. Գյումրի Ուռուցքաբանական կենտրոն	40	1	Տեղադրված
7.	Ք. Երևան, Գ.Չաուշի 11/1	20	1	Տեղադրված
8.	ք. Հրազդան Երևանյան 42/8-9	15	1	Տեղադրված
9.	ք.Վանաձոր Նժդեհի 2/42 բժշկական կենտրոն	80	1	Տեղադրված
10.	ք.Վանաձոր Բաղրամյան պողոտա 24-1 Ոստիկանության Տարոնի հենակետ	15	1	Տեղադրված
11.	ք. Գյումրի, Հակոբյան 39, «Դ-լինկ» ՍՊԸ	25	1	Տեղադրված
12.	ք. Գյումրի ԱԻՆ Խրիմյան Հայրիկ 38	15	1	Տեղադրված
13.	ք. Գյումրի, Երևանյան խճուղի 117/3	32	1	Տեղադրված
14.	գ. Երևան, Սիսակյան 22 շենքի հարևանությամբ	50	1	Տեղադրված
15.	գ. Երևան, Քանաքեռական, Մրգաշենի խճուղի 3 հողամաս	25	1	Տեղադրված
16.	ք. Դավթաշեն, 2թաղ., 26/5	25	1	Տեղադրված
17.	ք. Երևան, Անտառային 120	25	1	Տեղադրված
18.	Բալախովիտ, ԱԻՆ-ի հարևանությամբ	15	1	Տեղադրված
19.	ք. Երևան, Ահարոնյան փ. 16, բն. 9	15	2	Տեղադրված
20.	ք. Երևան, Ներսիսյան 10 շենքի նկուղ	15	1	Տեղադրված
21.	Առինջ 27 փ.	25	1	Տեղադրված
22.	ք. Հրազդան, Սպանդարյան 64	15	1	Տեղադրված
23.	ք. Հրազդան, Մ.Բաղրամյան թաղամաս, Պուրակային փողոց 38	20	1	Տեղադրված
24.	ք.Հրազդան, Կենտրոն, Տիգրան Մեծի փողոց 38	20	1	Տեղադրված
25.	Զերմուկ, Շահումյան 3, «Ստեփանյան Հայրիկ Ֆրունզի»ԱԶ	20	1	Փոխարինված
26.	Մևան, Գազարին խճուղի 61/4, «Տելեմաք Գազ» ՍՊԸ	15	1	Փոխարինված
27.	Նուբարաշեն 11 փողոց 2/3, Վլադիկ Պապոյան	15	1	Տեխ. ակտ
28.	Կողբի 1 փողոց 43/2, Էդուարդ Հարությունյան	15	1	Տեխ. ակտ
29.	Եղեգնաձոր, Լևոնյան 8, ՍԱՀԱԿՅԱՆ ԱՇՈՏ	15	1	Փոխարինված
30.	Եղեգնաձոր, Լևոնյան 17, ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ	15	1	Փոխարինված
31.	Եղեգնաձոր, Լևոնյան, ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԱ	15	1	Փոխարինված
32.	Եղեգնաձոր, Լևոնյան, ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԱԳԻԿ	15	1	Փոխարինված
33.	Եղեգնաձոր, Լևոնյան 15, ԽԱԼԱԹՅԱՆ ԳԱԳԻԿ	15	1	Փոխարինված
34.	Եղեգնաձոր, Լևոնյան 15, ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ	15	1	Փոխարինված
35.	Եղեգնաձոր, Լևոնյան նրբ. 19, ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆԻԿ	15	1	Փոխարինված
36.	Եղեգնաձոր, Լևոնյան 17, ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆՈՐԻԿ	15	1	Փոխարինված

37.	Եղեգնաձոր, Լևոնյան 20, ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՅՈՒՐԻԴ	15	1	Փոխարինված
38.	ք. Արմավիր, Աբովյան փ. 4 նրբ. Ցտ, Անտոնյան Շավարշ	15	1	Տեղափոխված
39.	Դավիթ-Բեկ 64, 64/1, Ավետիք Մեհրաբյան	15	1	Տեղափոխված
40.	Արշակունյաց 127/17, Էկոֆորմ ՍՊԸ	25	1	Տեղափոխված
41.	Արշակունյաց 127/17, Էկոֆորմ ՍՊԸ	25	1	Տեղափոխված
42.	ԶԲՎԵԺ 2ԴԱՇՏ-6/4,6/, Սեփ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԲԳԱՐ	20	1	Փոխարինված
43.	Արշակունյաց 125/3, ԿԵՆՅԱՂԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՍՊԸ	50	1	Տեղափոխված
44.	ք. Արտաշատ, Օգոստոսի 23/107, Արտաշատ Պլազա	50	1	Փոխարինված
45.	Կապան, Շինարարներ թաղ, <<Ջանգեգուր հասկ>> ՍՊԸ	15	1	Փոխարինված
46.	Կապան, Թումանյան 14, Արվեստի մանկական դպրոց	15	1	Փոխարինված
47.	Կապան, Շահումյան փող, <<Կապանի Հանրախանութ>> ՍՊԸ	15	1	Փոխարինված
48.	Կապան, Լեռնագործներ 14/5, ԱԶ Աշոտ Մարտիրոսյան	15	1	Փոխարինված
49.	գ. Քարակերտ, Գայի 3, Պողոսյան Օֆելյա	15	1	Տեղափոխված
50.	գ. Քարակերտ, Գայի 4, Ռստակյան Շուրա	15	1	Տեղափոխված
51.	գ. Քարակերտ, Գայի 5, Խաչատրյան Գագիկ	15	1	Տեղափոխված
52.	գ. Քարակերտ, Գայի 7, Բարեյան Վլադիմիր	15	1	Տեղափոխված
53.	գ. Քարակերտ, Գայի 8, Ղուկասյան Արշալույս	15	1	Տեղափոխված
54.	գ. Քարակերտ, Գայի 9, Մանուկյան Ռաֆիկ	15	1	Տեղափոխված
55.	գ. Քարակերտ, Գայի 10, Սահակյան Վահան	15	1	Տեղափոխված
56.	գ. Քարակերտ, Գայի 11, Հովիկյան Նաիրա	15	1	Տեղափոխված
57.	գ. Քարակերտ, Գայի 15, Գրիգորյան Լուիզա	15	1	Տեղափոխված
58.	գ. Քարակերտ, Գայի 16, Սահակյան Հայկազ	15	1	Տեղափոխված
59.	գ. Քարակերտ, Գայի 17, Թովմասյան Վաչագան	15	1	Տեղափոխված
60.	գ. Քարակերտ, Գայի 18, Թովմասյան Գասպար	15	1	Տեղափոխված
61.	գ. Քարակերտ, Գայի 19, Գրիգորյան Էլիզա	15	1	Տեղափոխված
62.	գ. Քարակերտ, Գայի 20, Շահոյան Ռազմիկ	15	1	Տեղափոխված
63.	գ. Քարակերտ, Գայի 21, Զահոյան Խաչիկ	15	1	Տեղափոխված
64.	գ. Քարակերտ, Գայի 22, Թադևոսյան Վանուշ	15	1	Տեղափոխված
65.	գ. Քարակերտ, Գայի 23, Հարությունյան Էմիլ	15	1	Տեղափոխված
66.	գ. Քարակերտ, Գայի 25, Հովհաննիսյան Գրետա	15	1	Տեղափոխված
67.	գ. Քարակերտ, Գայի 26, Վահանյան Կամո	15	1	Տեղափոխված
68.	գ. Քարակերտ, Գայի 30, Պողոսյան Արզամ	15	1	Տեղափոխված
69.	գ. Քարակերտ, Գայի 32, Սարգսյան Հրանտ	15	1	Տեղափոխված
70.	գ. Քարակերտ, Գայի 33, Գրիգորյան Արթուր	15	1	Տեղափոխված
71.	գ. Քարակերտ, Գայի 36/1, Թադևոսյան Նորիկ	15	1	Տեղափոխված
72.	գ. Քարակերտ, Գայի 39, Գրիգորյան Գրետա	15	1	Տեղափոխված
73.	գ. Քարակերտ, Գայի 40, Գրիգորյան Գալինո	15	1	Տեղափոխված
74.	գ. Քարակերտ, Գայի 42, Հարությունյան Անտոն	15	1	Տեղափոխված
75.	գ. Քարակերտ, Գայի 46, Սարգսյան Մոս	15	1	Տեղափոխված
76.	գ. Քարակերտ, Գայի 47, Մաիլյան Անիշկա	15	1	Տեղափոխված
77.	գ. Քարակերտ, Գայի 49, Մարկոսյան Համլետ	15	1	Տեղափոխված
78.	գ. Քարակերտ, Գայի 50, Խուդոն Ասյա	15	1	Տեղափոխված

79.	գ. Քարակերտ, Գայի 50, Պասկրիչյան Սուսաննա	15	1	Տեղափոխված
80.	գ. Քարակերտ, Գայի 53, Մարկոսյան Արտուշ	15	1	Տեղափոխված
81.	գ. Քարակերտ, Գայի 54, Հովսեփյան Անդրանիկ	15	1	Տեղափոխված
82.	գ. Քարակերտ, Գայի 56, Անտոնյան Անահիտ	15	1	Տեղափոխված
83.	գ. Քարակերտ, Գայի 58, Կարապետյան Սամվել	15	1	Տեղափոխված
84.	գ. Քարակերտ, Գայի 60, Դալիբալյան Վահրամ	15	1	Տեղափոխված
85.	գ. Քարակերտ, Գայի 62, Դանիելյան Գագիկ	15	1	Տեղափոխված
86.	գ. Քարակերտ, Գայի 62, Դանիելյան Գագիկ	15	1	Տեղափոխված
87.	գ. Քարակերտ, Գայի 66, Բրոյան Ֆահրադ	15	1	Տեղափոխված
88.	գ. Քարակերտ, Գայի 70, Հովսեփյան Կարեն	15	1	Տեղափոխված
89.	գ. Քարակերտ, Երկաթուղայինների 20, Թամոյան Մամե	15	1	Տեղափոխված
90.	գ. Քարակերտ, Սևակի 1, Նազարեթյան Հակոբ	15	1	Տեղափոխված
91.	գ. Քարակերտ, Սևակի 2, Թամոյան Մարատ	15	1	Տեղափոխված
92.	գ. Քարակերտ, Սևակի 3, Հովհաննիսյան Արայիկ	15	1	Տեղափոխված
93.	գ. Քարակերտ, Սևակի 11, Թահմազյան Առաքել	15	1	Տեղափոխված
94.	գ. Քարակերտ, Սևակի 13, Առուշանյան Լևոն	15	1	Տեղափոխված
95.	գ. Քարակերտ, Սևակի 16, Թովմասյան Վաղինակ	15	1	Տեղափոխված
96.	գ. Քարակերտ, Սևակի 19, Թախմազյան Սերյոժա	15	1	Տեղափոխված
97.	Տեքյան փողոց 8/1, Ռոզա Սարգսյան	15	1	Տեխ. ակտ
98.	Վիլյուսի փողոց 67/2 կաթսայատուն, Բրենդլիդեր Հ/Ձ ՍՊԸ	20	1	Տեխ. ակտ
99.	Խաղաղ Դոնի 19 շենքի դիմաց կրպակ, Արուսյակ Սարգսյան	15	1	Տեխ. ակտ
100.	Խ. Դաշտենց 61, Ավետիք Պողոսյան	15	1	Տեխ. ակտ
101.	Վիլյուսի փողոց 91/2 կաթսայատուն, Ժանետա Գյուրջյան	20	1	Տեխ. ակտ
102.	Դիլիջան, Կալինինի փողոց 4-րդ նրբ. N9 տ. , Դավթյան Հասմիկ	15	1	Փոխարինված
103.	Դիլիջան, Կալինինի փողոց 4-րդ նրբ. N9 ա տ. , Գրիբորյան Արարատ	15	1	Փոխարինված
104.	Սևան, Մարգիս Սևանեցի 5, ՀՀ Ազգային Անվտանգության Ծառայություն	15	1	Նոր տեղադրված
105.	Գ. Նժդեհի 24/3, Մարինե Հակոբյան	15	1	Տեխ. ակտ
106.	ք. Եղեգնաձոր, Միկոյան 11/1-5, Հասմիկ Մանուկյան	15	1	Տեխ. ակտ
107.	գ. Առինջ, Մ. Մկրտչյան թաղամաս 13 փողոց 2 հող, Կարինե Հարությունյան	15	1	Տեխ. ակտ
108.	Միկոյան փողոց 2/15, Հրայր Ավագյան	15	1	Տեխ. ակտ
109.	Ավան, Սայաթ Նովա թաղամաս 1շենք 2 ա/տնակ, Ժաննա Նիկոյան	15	1	Տեխ. ակտ
110.	Ավան, Սայաթ Նովա թաղ. 1շենք 14 ա/տնակ, Մարիետա Հարությունյան	15	1	Տեխ. ակտ
111.	Նուբարաշեն 1 փողոց 18/1, Մոստ Փիլոյան	15	1	Տեխ. ակտ
112.	ք. Արմավիր, Աբովյան փողոց թիվ 9 խանութ, Արման Միքայելյան	20	1	Տեխ. ակտ
113.	Եղեգնաձոր, Շահումյան փողոց, ՀՀ ԱՆ "ՀՎԿԱԿ" ՊՈԱԿ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	15	1	Փոխարինված
114.	Բարձրաշեն, Արցախի փողոց 11 , Էդիկ Մաթևոսյան	15	1	Փոխարինված
115.	Քրիստափորի 2-րդ նրբանցք 11/1, Էդուարդ Ավետիսյան	15	1	Տեղափոխված

116.	Դիլիջան, Պարզ լիճ N5, Զին մաս N14172/ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմական վարժարան /	50	1	Փոխարինված
117.	գ. Աճանան, Գետափ թաղ.1 /Կապան/, ԱԶ Վաչե Սարգսյան	15	1	Տեղափոխված
118.	Արտաշատի խճ. 7/1 հրշեջ մաս և 7/2 հող, Յունիքիմ ՍՊԸ	15	1	Տեխ. ակտ
119.	Դուշամբեի 2/1, Արամ Միրզոյան	15	1	Տեխ. ակտ
120.	ք. Սիսիան, Որոտան 3ա, «Աննա-Դիանա» ՍՊԸ	20	1	Փոխարինված
121.	Նոր Խարբերդ 20 փողոց 530 , Սեդա Գասպարյան	15	1	Տեղափոխված
122.	Գալշոյան 7/3, Լիլիթ Ուլիխանյան	15	1	Տեխ. ակտ
123.	գ. Մրգաշատ, 10 փողոց 1 փակուղի 1, Մարինե Խաչատրյան	15	1	Տեղափոխված
124.	գ.Նորատուս /Գավառ/, Խաչատրյան Սարգիս Հայկարամի	15	1	Փոխարինված
125.	գ.Նորատուս /Գավառ/, Գրիգորյան Ժիրիկ Գառնիկի	15	1	Փոխարինված
126.	ք. Արմավիր, Հանրապետության փ. 35-2, Ռազմիկ Մարտիրոսյան	15	1	Փոխարինված
127.	Ազատամարտիկներ 5-րդ նրբանցք 31, Շմավոն Հարությունյան	15	1	Փոխարինված
128.	Գորիս, Սալ- քար 6 շենք, 13 բն. , Բաբայան Գարեգին Աշոտի	15	1	Փոխարինված
129.	ք. Արմավիր, Թումանյան փ 4նրբ., 12տ., Փիրուզ Պողոսյան	15	1	Տեղափոխված
130.	ք. Արմավիր, Նալբանդյան փ. 30տ., Աշոտ Ավետիսյան	15	1	Տեղափոխված
131.	Բագրևանդի փողոց 99/2, Ատոմ Սիմոնյան	15	1	Տեխ. ակտ
132.	Բագրևանդի փողոց 34/4, Արման Վարդանյան	15	1	Տեխ. ակտ
133.	Թևոսյան փողոց 36/3, Նաիրա Հովհաննիսյան	20	1	Տեխ. ակտ
134.	Ն. Կյուրիին 21փ. 148, Մովսիսյան Իսախ	15	1	Նոր տեղադրված
135.	Ն. Կյուրիին 30փ. նրբ. 10, Սարգսյան Նորայր	15	1	Նոր տեղադրված
136.	Ն. Կյուրիին 30փ. 4, Հոսյան Գառնիկ	15	1	Նոր տեղադրված
137.	Ն. Կյուրիին 21փ. 155, Քոչարյան Օհան	15	1	Նոր տեղադրված
138.	Ն. Կյուրիին 30փ. 43, Հովհաննիսյան Սիմակ	15	1	Նոր տեղադրված
139.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 14, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԱՆ	15	1	Փոխարինված
140.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 20, ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ	15	1	Տեղափոխված
141.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 18, ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ	15	1	Տեղափոխված
142.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 16, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՕՆԻԿ	15	1	Տեղափոխված
143.	Գ. ԱՐԱՐԱՏ, Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 19, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՄԼԵՏ	15	1	Տեղափոխված
144.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 21, ՊԱՊԻԿՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ		1	Տեղափոխված
145.	Գ. ԱՐԱՐԱՏ, ԽԱԶԱՏՐՅԱՆ ԱՐԵՎԻԿ	15	1	Տեղափոխված
146.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 12, ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՐՏԻԿ	20	1	Տեղափոխված
147.	Գ. ԱՐԱՐԱՏ, Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 8, ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԳՐԻՇԱ	15	1	Տեղափոխված
148.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 9, ԱՆՈՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ	15	1	Տեղափոխված
149.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 5, ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ		1	Տեղափոխված
150.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 3, ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱՐԵԿ	15	1	Տեղափոխված

151.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 4, ԽԱԶԱՏՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ	15	1	Տեղափոխված
152.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 1, ԽԱԶԱՏՐՅԱՆ ՎՐԵԺ	15	1	Տեղափոխված
153.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 7/1, ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ	15	1	Տեղափոխված
154.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 7, ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՀԵՂԻՆԵ	15	1	Տեղափոխված
155.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 2, ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՍԵՓ	15	1	Տեղափոխված
156.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ, ՇԱՀՈՒՄՅԱՆ ԱԼԲԵՐՏ	15	1	Տեղափոխված
157.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 15, ՀՈՎՍԵՓՅԱՆ ՆԱՏԱՇԱ	15	1	Տեղափոխված
158.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 17, ՍՏԵՓԱՆՅԱՆ ՌԻՄԱ	15	1	Տեղափոխված
159.	Գ. ԱՐԱՐԱՏ, ՆԵՐՍԻՍՅԱՆԻ 13, ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ	15	1	Տեղափոխված
160.	Կապան, Ա.Մանուկյան փող. 1-ին նրբ., ՀՀ ԱԻՆ ՓԾ ՍՅՈՒՆԻՔԻ ՄՓՎ	25	1	Փոխարինված
161.	Կապան, Կ.Դեմիրճյանի հրապարակ, «Լեռնագործ» ՍՊԸ	50	1	Փոխարինված
162.	Կապան, Մ.Ստեփանյան փող. 3, «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ Կապան Մ/Ճ	15	1	Փոխարինված
163.	Խաղաղ Դոնի փողոց 23/10, Նաիրա Հարությունյան	15	1	Տեխ. ակտ
164.	Նոր Խարբերդ 13 փողոց 131/31 հող, Կարինե Այվազյան	15	1	Տեխ. ակտ
165.	Արագածի փողոց 97 տան հարակից կառույց, Պարույր Մանուկյան	15	1	Տեխ. ակտ
166.	Չեխովի փողոց 17/2, Ալբերտ Գասպարյան	15	1	Տեխ. ակտ
167.	Կիլիկիա, Այասի փողոց 51, Ռաֆայել Հարությունյան	15	1	Տեխ. ակտ
168.	Իսահակյան փողոց 28, Ասադոր ՍՊԸ	15	1	Տեխ. ակտ
169.	Արմավիրի մարզ, գ. Բաղրամյան 6 փողոց 6, Միքայել Մկրտչյան	15	1	Տեխ. ակտ
170.	Շիրակի փողոց 1/68, ՍանՖուլ ՍՊԸ	25	1	Տեխ. ակտ
171.	Սարմենի փողոց 9 ավտոտնակ, Ռադիկ Խաչատրյան	15	1	Տեխ. ակտ
172.	Արոլյան 7 , «ԻՆՏԵՐՍԵՐՎԻՍ-ԷԴԱՄ» ԱՐՏ. ԿՈՈՊ	15	1	Փոխարինված
173.	Արոլյան 5/1, «Սպիտակ Տնակ» ՍՊԸ	15	1	Փոխարինված
174.	գ. Խնձորեսկ /Գորիս/, Զինմաս 60369	40	1	Փոխարինված
175.	Մոլդովական 47/5, Արամ Ճզմաչյան	20	1	Փոխարինված
176.	Մոլդովական 32/12, Կարապետ Նորավան	15	1	Փոխարինված
177.	Դիլիջան, Կալինինի փողոց N264, Ալիխանյան Արեգնազ	15	1	Նոր տեղադրված
178.	ք. Արմավիր, Բաղրամյան 25/17, Հակոբյան Կարինե Ա/2	15	1	Փոխարինված
179.	գ. Մյանիկյան, Իսակովի 19, ՀՀ ԱԻՆ ՓԾ Բաղրամյանի ՀՓԶ	15	1	Փոխարինված
180.	գ. Մյանիկյան, Բաղրամյան 45, ՀՀ ԱԱԾ Արմավիրի ՄՎ Բաղրամյանի բաժանմունք	15	1	Փոխարինված
181.	գ. Նորավան, 5 փող 29/1, Նորավանի գյուղապետարան	15	1	Փոխարինված
182.	գ. Ակնալիճ, Ազատամարտիկների 21, Ակնալճի միջնակարգ դպրոց	20	1	Փոխարինված
183.	Վ.Շենգավիթ 2 փողոց 1, Մոֆիա Խաչատրյան	15	1	Տեղափոխված

184.	ք. Արմավիր, Գորկու փ. 39տ, Մուրադ Հովհաննիսյան	15	1	Տեղափոխված
185.	գ. Մրգաշատ, 10փ. 1 նրբ., 2տ, Ռոմա Առաքելյան	15	1	Տեղափոխված
186.	գ. Մրգաշատ, 10փ. 57տ., Անահիտ Հովհաննիսյան	15	1	Տեղափոխված
187.	ք.Վարդենիս, Գայի փ. 15, Գնել Խաչատրյան ՄՊԸ	15	1	Փոխարինված
Ընդամենը			188	

1.3. Ջրահեռացման համակարգ

➤ Քաղաք Մասիս

Մասիս քաղաքի 3-րդ թաղամասում գտնվող հ.12 հանրակացարանի 38 մասնաշենքի դիմացով անցնող D=200մմ L=30մ կերամիկական կոյուղագիծն ամբողջությամբ քայքայվել էր: Առկա բազմաթիվ վթարները ստեղծում էին հակասանիտարական իրավիճակ: Խնդրի կարգավորման համար D=200մմ վթարված կերամիկական կոյուղագիծը փոխարինվել է D=150մմ երկշերտ պոլիէթիլենային ծալքավոր կոյուղագծով:



Ստորև ներկայացվում են ջրահեռացման ցանցում իրականացված աշխատանքների ամփոփ տվյալները:

Հ/Հ	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում	Անձրևնդունիչների մաքրում	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում
		մ	հատ	հատ	մ
1.	Արաբկիր	1410	303	1	96
2.	Շահումյան	1430	165	85	0
3.	Մաշտոց	1400	297	0	40
4.	Զեյթուն	567	732	307	0
5.	Արթիկ	175	31	0	0

6.	Տաշիր	315	0	0	0
7.	Իջևան	1371	7	0	0
8.	Շիրակ	100	477	0	12
9.	Ալավերդի	1580	92	0	0
10.	Աշոցք	0	4	0	4
11.	Լոռի	5069	142	0	16
12.	Սպիտակ	400	53	0	0
13.	Նոյեմբերյան	125	30	0	0
14.	Բերդ	105	14	0	0
15.	Ստեփանավան	315	4	0	0
16.	Ապարան	0	19	0	0
17.	Թալին	0	7	0	0
18.	Աբովյան	2065	89	0	0
19.	Չարենցավան	1980	46	0	0
20.	Հրազդան	1590	84	0	0
21.	Աշտարակ	2.9	30	0	0
22.	Էջմիածին	2950	110	0	0
23.	Կենտրոն	1010	288	0	0
24.	Հյուսիս	4026	361	0	6
25.	Հարավ	315	417	0	0
26.	Էրեբունի	915	173	0	0
27.	Արմավիր	3150	88	0	0.6
28.	Արտաշատ	1352	81	0	0
29.	Արարատ	3560	56	0	1.5
30.	Մասիս	0	41	0	54
31.	Գավառ	180	21	0	24
32.	Սևան	3710	86	0	7
33.	Մարտունի	1170	12	0	0
34.	Վարդենիս	1200	13	0	0
35.	Ճամբարակ	0	13	0	0
36.	Դիլիջան	683	18	0	26
37.	Միսիան	1275	106	0	0
38.	Գորիս	60	28	0	0
39.	Եղեգնաձոր	564	12	0	3
40.	Վայք	695	15	0	0
41.	Ջերմուկ	0	27	0	0
42.	Կապան	140	48	0	0
43.	Մեղրի	0	24	0	0
Ընդամենը		46954.9	4664	393	290.1

1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի հեռացման և մաքրման կայանների» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները.

➤ «Գավառ» ԿՊ-ում պոմպի էլեկտրական համակարգը կրկին խափանվել էր: Այն վերանորոգվել, փորձարկվել և տեղադրվել է, ինչի արդյունքում պոմպի աշխատանքը կարգավորվել է և աշխատում է բնականոն ռեժիմով:

➤ «Սևան N3» ԿՊ-ի էլ.ենթակայանից դեպի պոմպակայան սնուցող վթարված 0.4կՎտ լարման մալուխը վերանորոգվել է և աշխատում է անխափան:



➤ «Դիլիջան» ԿՄԿ-ի արտադրական մասնաշենքում գտնվող օդամուղներից մեկի առանցքակալը շարքից դուրս էր եկել, որի հետևանքով 1-ին հոսքագիծը չէր աշխատում: Առանցքակալը փոխարինվել է, և օդամուղն աշխատում է անխափան: Փոխարինվել է նաև խցանված օդամուղի օդի ֆիլտրը:

➤ «Վարդենիս» ԿՊ-ում «Wilo» մակնիշի կոյուղու պոմպը խցանվել էր և դժվարությամբ էր ջուր մղում: Պոմպը բարձրացվել է հորից, ապամոնտաժվել և մաքրվել կուտակված աղբից: Ապամոնտաժվել և մաքրվեն են նաև հակադարձ փականները, որտեղ ևս աղբ էր կուտակվել:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աշխատանքների հակիրճ նկարագիրը

N	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ (տոննա)
1	Ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	-	79 952	28.8
2	Ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	-	84 505	14.4
3	Ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	-	216 141	7
4	Ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	-	151 439	7.9
5	Ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	-	123 487	9
6	Ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	16 763	-	-
7	Ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	7 387	-	-
8	Ք. Գավառ	«Գավառ» պ/կ	21 600	-	-
9	Ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	17 700	-	-
10	Ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	-	-

1.5. Էներգոհամակարգ

Դեկտեմբեր ամսվա ընթացքում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

Հ/Հ	Հասցե	Աշխատանքների նկարագրությունը
1	Կոմիտաս 2	Պոմպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
2	Բ3 թաղ. 402	Պոմպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
3	Բ3 թաղ. 262	Էլ. համակարգի վերանորոգում, էլ. սարքերի գննում
4	Սեբաստիա 141	Պոմպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
5	Սեբաստիա 23	Պոմպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
6	Սեբաստիա 25	Պոմպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
7	Լեռ Կամսարի 1 - 28	Պոմպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
8	Արաբկիր 19 փ. 6 - 97	Պոմպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
9	Մամիկոնյանց 62 - 77	Պոմպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
10	Գյուլբենկյանի 46 - 36	Պոմպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
11	Ադոնց 13	Պոմպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
12	Ադոնց 9	Պոմպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
13	Ադոնց 3	Պոմպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
14	Զիվանի 11/1 - 47	Էլ. համակարգի վերանորոգում, էլ. սարքերի գննում, կարգավորում

15	Բաղրամյան 1 անց. 1շենք	Պումպի վերանորոգում, Փոխվել է 1 եռաֆազ թողարկիչ, 2 վերանորոգման հավաքածու, 2 առանցքակալ, 1 լիսեռ Կատարվել է շարժիչի վերանորոգում
16	Ահարոնյանի 2/1 - 48	Պումպի վերանորոգում, 4h առանցքակալ, 2 վերանորոգման հավաքածու, 1 լիսեռ, 1 ավտոմատ անջատիչ
17	Զիվանի 11/1	Պումպի վերանորոգում, 1h մեմբրան 200լ, 1 վերանորոգման հավաքածու, 1 թերմոռելե, 1անցում,
18	Ուլնեցի 66ա	Պումպի վերանորոգում, Պումպի աշխատանքի զննում, կարգավորում
19	ք. Էջմիածին Շահումյան 46, 4822	Պումպի վերանորոգում, ճնշումային բաքի մեմբրան 300լ և ճնշումային բաքի միացման դետալներ /պլաստիկ/
20	Ազատության 11,11/ա	Պումպի վերանորոգում, Պումպի աշխատանքի զննում, կարգավորում
21	Ա. Ավետիսյան 80	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
22	Ն. Դուման 53	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
23	Հակոբյան 7	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
24	Ա. Խաչատրյան 1-10	Պումպի վերանորոգում, Փոխվել է 2բարձր ճնշման ռելե, 1 ավտոմատիկայի կառավարիչ
25	Վ. Համբարձումյան 972 30բ	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
26	Մամիկոնյանց 29/1 - 80	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
27	Մամիկոնյանց 26ա	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
28	մ. Արագածոտն գ. Կոշ	Էլ. համակարգի վերանորոգում, Էլ. համակարգի վերանորոգում
29	Զեյթուն 8փող. 12	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
30	Շահումյանի 8ա	Պումպի վերանորոգում, Փոխվել է 2 եռաֆազ թողարկիչ, 1 ավտոմատ անջատիչ, բաքի միացման դետալներ
31	Մամիկոնյանց 1ա	Պումպի վերանորոգում, Փոխվել է 1 վերանորոգման հավաքածու, 1 լիսեռ
32	Շինարարների 15/1 - 79	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
33	Մուրենյանց 11/1	Պումպի վերանորոգում, 1h եռաֆազ թողարկիչ, 1h առանցքակալ, 1h խցուկ, վնասված դետալների վերականգնում
34	Մամիկոնյանց 1/1 - 49/ա	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
35	Շահումյանի 8/1 - 44	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
36	Արդուրյան 29	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
37	Քանաքեռ հեկ պոմպակայանում	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
38	Ղափանցյան փողոց	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
39	Ավետ Ավետիսյանի 78 - 46	Էլ. համակարգի վերանորոգում, Էլ. սարքերի վերանորոգում
40	Ն. Տիգրանյան 7	Էլ. համակարգի վերանորոգում, 1h եռաֆազ թողարկիչ, 1h լիսեռ, 1h բարձր ճնշման ռելե
41	Բարբյուս 63	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
42	Թրիվիայան 3	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
43	Կոմիտասի 58 - 10	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
44	Գյուլբենկյանի 43 - 74	Պումպի վերանորոգում, 1h ցածր ճնշման ռելե, 1h բարձր ճնշման ռելե, 1h եռաֆազ թողարկիչ

45	ք. Չարենցավան 6թաղ. 18շ	Էլ. համակարգի վերանորոգում, 1հ ժամային ռեյե, 1հ եռաֆազ թողարկիչ
46	ք. Էջմիածին շահումյան 69	Էլ. համակարգի վերանորոգում, 1հ ավտոմատ անջատիչ, 1հ հետադարձ փական
47	Զ. Անդրանիկի թաղ. 61 - 46	Պումպի վերանորոգում, Փոխվել է 1 ավտոմատիկայի կառավարիչ, 1 եռաֆազ թողարկիչ, 1 խցուկ
48	Ադոնցի 9 - 21	Շարժիչի փոխարինում, շարժիչի վերանորոգում(շարունակելի)
49	Լուսակերտ բանավան	Պումպի վերանորոգում, 4հ առանցքակալ, 1հ խցուկ, 2հ կցորդիչ, 1հ լիսեռ, վնասված դետալների վերականգնում
50	ք. Էջմիածին չարենցի 1	Պումպի վերանորոգում, պումպի ապամոնտաժում
51	Ադոնց 9շ	Պումպի վերանորոգում, 1հ վերանորոգման հավաքածու, 1հ թերմո ռեյե և շարժիչի վերանորոգում
52	Հ. Քոչար 13/1	Էլ. համակարգի վերանորոգում, 1հ ցածր ճնշման ռեյե, 2հ բարձր ճնշման ռեյե, 1հ ֆազի բացակայության ռեյե
53	Մամիկոնյանց 47/1 - 56	Էլ. համակարգի վերանորոգում, Էլ. համակարգի վերանորոգում
54	Փափազյան 11շ 39բ	Էլ. համակարգի վերանորոգում, Էլ. համակարգի վերանորոգում
55	Գյուլբենկյանի 43	Պումպի վերանորոգում, պումպի աշխատանքի կարգավորում
56	Զ. Անդրանիկի թաղ. 61 շենք	Պումպի վերանորոգում, փոխվել է 1 ավտոմատիկայի կառավարիչ, 1 բարձր ճնշման ռեյե, 1 ֆազի բացակայության կառավարիչ, 1 եռաֆազ թողարկիչ
57	Գյուլբենկյանի 43 - 8	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
58	Գյուլբենկյանի 44	Պումպի վերանորոգում, փոխվել է ռետինե խողովակը միացման դետալներով, 1 եռաֆազ թողարկիչ, 1 վերանորոգման հավաքածու
59	Կոմիտասի 14 - 10	Պումպի վերանորոգում, փոխվել է 2հ բարձր ճնշման ռեյե, 1հ ավտոմատիկայի կառավարիչ, 1հ թերմոռեյե
60	ք. Էջմիածին չարենցի 1	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
61	Ադոնցի 17/3 - 36	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
62	Շինարարների 15/1 - 55	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
63	Շինարարների 15/1 - 95	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
64	Շինարարների 15/2	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
65	Շինարարների 10/1	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
66	Կ. Ուլնեցու 49	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
67	Կ. Ուլնեցու 51	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
68	Ահարոնյան 2/1	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
69	Ահարոնյան 7	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
70	Ա. Խաչատրյանի 26 - 26	Պումպի վերանորոգում, 4հ առանցքակալ, 1հ վերանորոգման հավաքածու, 1 թերմո-ռեյե, 2հ պումպի շարժիչի վերանորոգում
71	Կ. Ուլնեցու 66 - 66	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
72	Ավետ Ավետիսյանի 74 - 52	Էլ. համակարգի վերանորոգում, էլ. սարքերի կարգավորում
73	Մամիկոնյանց 23/1	Էլ. համակարգի վերանորոգում, էլ. սարքերի կարգավորում

74	ք. Էջմիածին վաղարշապատ թաղ	Էլ. համակարգի վերանորոգում, էլ. սարքերի կարգավորում
75	Մամիկոնյանց 23/12	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
76	Կոմիտաս 462	Պումպի վերանորոգում, փոխվել է ռետինե խողովակ միացման դետալներով, 1h եռաֆազ թողարկիչ, 1h ժամային ռելե
77	Ա. Խաչատրյան 262	Պումպի վերանորոգում, 1h վերանորոգման հավաքածու, 2h հետադարձ փական
78	մ. Կոտայք, ք. Ծաղկաձոր	Պումպի վերանորոգում և աշխատանքի կարգավորում:
